

ԼԵԶՈՒՆԳԻՏԱԿԱՆ

ԿԱՍԻՍԵՐԷՆԻ, ԹՐԱԿԵՐԷՆԻ, ՓՈԽԻԳԵՐԷՆԻ ԵՒ ՓՈՔՐ-ԱՍԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)

(Շար. Նախորդ թիվն)

Հաթեան արձանագրութիւնները աւելի յաջողութեամբ և ճիշտ վերլուծելուն նըպատեցին մի քանի հանգամանքներ, այսպէս՝ գտնուեց մի երեքլեզուեան բառարան սումերերէն-աքքաթերէն-հաթերէն, թէև համառօտ. երկրորդ՝ մի մեծ արձանագրութիւն երկու լեզուով, հաթերէն և աքքաթերէն, որ պատկանում է հաթերի Հաթթուշիլի Ս. թագաւորին (Ն. Ք. 1950 թուերին)։ Բայց աւելի կարեւոր է այն հանգամանքը՝ որ արձանագրութեանց մեծ մասը, համաձայն աքքաթերէն արձանագրութեանց ընդհանուր սովորութեան, գրուած է սումերական գաղափարանշաններով, այնքան որ շատ տողեր ամբողջապէս աքքաթերէն են։ Այս պատճառով ահա շատ տեղ ինքնին կարգացում և հասկացում է։ Դադափարագիր դրութեան ձեւը մի վատ կողմ ունի. նա բաւարարում է պատմաբանին, որովհետև նա փնտռում է գրուածքի իմաստը, բայց անօգուտ է լեզուաբանի համար, որ փնտռում է բառի իմաստի հետ նաև ընթերցանութիւնը և նոյն իսկ հնչական ներութիւնները։ Ահա այս է պատճառը, որ թէև նորագիւտ հաթեան արձանագրութիւններ ամբողջապէս թարգմանուեցան, բայց բազմաթիւ հասարակ բառերի ընթերցումը չիմացուեց. այսպէս 1, 2, 3, 4, 5 . . . թուանշանները, թագաւոր, աստուած, որդի և այլն բառերը։ Սրանց բոլորը պատկերագրով են և ոչ տառերով։

Հաթեան արձանագրութիւնները սոսկ տարեգրութիւններ չեն, այլ ներկայացնում են մի ամբողջ գրականութիւն իր զանազան ճիւղերով. այսպէս ունինք թագաւորական գաւազանագրքեր, օրէնքների ժողովածու, գաշնագրեր, պատմութիւն, նա-

մակներ, բառարան, աղօթքներ, երեք և չորս լեզուով այբբենարան, մի նշանաւոր օրհներգութիւն 3500 տողից։ Աւելի կարեւոր է հաթեան քաղաքակրթութեան նըշանաւոր յուշարձանը, այն է նրանց օրէնագիրքը, որ հրատարակեց Փրանսերէն թարգմանութեամբ Հրոլնին (քող հիթիթ, Պարիզ 1922)։ Նոյնը գերմաներէն թարգմանութեամբ հրատարակեց Գիմմերը, որից էլ կատարուել և հրատարակուել է ուսերէն թարգմանութիւնը։

Այս օրինագիրքը՝ որ իր հնութեամբ կարող է համեմատուել միայն Համմուրաբիի օրինագրքի հետ (2100 Ն. Ք.), նրանից 700 տարի աւելի նոր է և գրուած է կամ հաթեան Շուպպիլուլիումաշ 1390-1350 թագաւորի օրով կամ նրա որդի Մուշշիլի Ք. ի 1347-1310 և կամ նուազ հաւանաբար Հատտուշիլի Գ. թագաւորի ժամանակ 1300-1270։ Օրինագրքի մեծ մասը վերաբերում է պատժական դատաստանագրքին և պարունակում է սպանութեան, վիրաւորման, գողութեան, ստրուկ փախցնելու և նման յանցանքների մասին զանազան պատիժներ։ Հետաքրքրական է որ գողութեան պատիժները առհասարակ տուգանքով են վերջանում. և տուգանքը տարբերում է համաձայն գողացուած աւարկայի արժէքի. այսպէս տարբեր է ոչխարի գողութեան պատիժը տաւարի գողութեան պատժից, և տաւարի գողութեան պատիժն էլ տարբերում է համաձայն գողացուած տաւարի տարիքի։ Օրէնագիրքը մի առ մի թուում է այս պատիժները մանրամասնութեամբ։ Բացում է ուսումնասիրութեան նոր աղբիւր իրաւունքի նախնական պատմութեան համար։

Միւս կարեւոր գործերից են.

1. Կոմանայի Պապանիկրի քրմապետի կազմած հաթեան ծիսարանը, որ բնագրով և թարգմանութեամբ հրատարակեցին Զոմմեր և Եհնիւլֆ (Լայպցիկ 1924)։ Այստեղ գտնում ենք հետաքրքրական տեղեկութիւններ հաթեան կրօնի, աստուածների, զոհաբերութեան, պատգամաթօսութեան, դեերի և տօնական զգեստաւորութեան մասին։

2. Հաթեան թագաւորների և շրջա-

(*) Վերցուած՝ մեծաւուր հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Ե. Դրսիս)։

կայ պետութեանց թագաւորների միջև կնքուած 10 մեծ դաշնագիր՝ աքթայերէն և սումերերէն լեզուներով, որ քնադրով ու թարգմանութեամբ հրատարակեց Վայդներ (Լայպցիգ 1923) երկու հատոր:

Լեզուարանական տեսակէտից պարզուեց, որ բոլոր արձանագրութիւնները մի լեզուով չեն, այլ գրուած են 8 տարբեր լեզուներով՝ սումերերէն, աքթայերէն, կամիսերէն, լուվերէն, բալայերէն, խարբիերէն, հաթերէն և մանդայերէն: Առաջին երկուսը հաթերի համար օտար, միւսները տեղական լեզուներ են: Ամենագլխաւորն է:

1. Կամիսերէն, որով գրուած է արձանագրութեանց մեծագոյն մասը: Այս անունը ենթադրական է. ոմանք կոչում են հաթերէն, ուրիշներ նեսերէն, ուրիշներ կաներէն և կամիսերէն կամ կանիսերէն: Մենք ընտրեցինք կամիսերէն ձևը: Կամիսները, ինչպէս նրանց լեզուի քերականութիւնը ցոյց տուաւ, հնդեւրոպական ժողովուրդ են. նրանք Ն. Ք. երրորդ հազարամեակի վերջում արչաւեցին Փոքր-Ասիա և նուաճելով տեղական ժողովուրդներին, տէր դարձան նրա կենտրոնական մասին: Աւելի յետոյ նրանք առաջացան դէպի հարաւ և իրենց տիրապետութեան տակ առին Կիլիկիան, Ասորիքը և Միջագետքը: Բարեկական ժամանակագրութեան մէջ յիշուած է թէ Բաբելոնի առաջին հարստութեան (2225-1926) վերջին շրջանում հաթերի թագաւորը արչաւեց Ասորեստանի վրայ: Այս թուականը հիմք է ծառայում ճշտելու Կամիսների նախնական գաղթը:

2. Հաթերէն(*), հար կամ աւելի ճիշտ խար են կոչուում տեղական հին նախարիկները, որոնց լեզուով գտնուած կայ 50 հար արձանագրութիւն, շատը կամիսերէն թարգմանութեամբ միասին: Այս լեզուն միւս բոլորից տարբեր է և ունի նախամասնկային գրութիւն. սրանից հետեւում է թէ այդ նախարիկները հնդեւ-

րոպացի չեն: Միւս տեղական ժողովուրդներն են:

3. Մանկայեցիք՝ իրանական ժողովուրդ, որ Մարաստանից գաղթել է Ն. Ք. երրորդ և երկրորդ հազարամեակին, ըստ Ասորեստանեան ժամանակագրութեան: Սրանց լեզուով գտնուած արձանագրութիւնները քիչ են, բայց ցոյց են տալիս իրանական ընդթը:

4. Խաբրի կամ հուբրի, որոնք պատկանում են միտանի ցեղին. սրանց լեզուով գրուած արձանագրութիւնները շատ չեն. մեծագոյնը վերոյիշեալ 3500 տողանոց օրհներգն է. լեզուն ներկայացնում է միատանքէնի մի բարբառը:

5. Բալա, որոնց լեզուով շատ քիչ բան կայ գրուած:

6. Լուվ, որոնց լեզուով ծանօթ է միայն 700 բառ և երկչեղեան մի բնագիր լուվերէն-կամիսերէն: Կամիսերէնին շատ մօտիկ բարբառ է:

Հնդեւրոպական եկւոր կամիսները տիրելով այս բոլոր ժողովուրդներին և պարտադրելով նրանց կամիսերէնը, միևնոյն ժամանակ մեծապէս ազդեցեցին տեղական լեզուներին. այնպէս որ կամիսերէնը թէև հիմնական բառերով ու քերականութեամբ հնդեւրոպական է, ինչպէս հայերէնը, բայց հայերէնի պէս ունի իր բառարանում օտար բառերի մի մեծ թիւ: Կամիսները քաղաքակրթական տեսակէտով ընկան ասորեստանցոց ազդեցութեան տակ և առին նրանցից բեւեռագրական արուեստը: Ինչպէս գիտենք բեւեռագրութեան հնարիչները եղել են Սումերները, որոնք Բաբելոնի նախագեմական բնիկներն են: Սումերներից բեւեռագրութիւնը անցաւ եկւոր սեմականներին. բայց այդ գրութիւնը այնպէս էր կազմուած, որ առանց սումերական լեզուի գիտութեան, անկարելի էր որ և է բան արձանագրել. ուստի Ասորեստանում եւ Բաբելոնում միշտ սովորում էին սումերերէնը՝ իբրեւ գիտական կամ ուսումնաւորութիւն: Այսպէս եղաւ նաեւ հաթերի երկրում: Նմանապէս աքթայերէնը այն ժամանակուայ Արեւելի գիւնական լեզուն էր և միջագոյնի դաշնագրերը կնքուած էին այս լեզուով: Ահա այս պատ-

(*) Ամերիկացիք նոր պեղումներ կատարելով Բողազքէոյից ոչ հեռու Ալիշար կոչուած վայրում, գտել են մի անձանոթ լեզու, որ խոսում են Անատոլի մի գիւղում մի քանի ձերուհիներ և որ հաթերէնի մնացորդ են կարծում:

ճառով կամիսները ստիպուած էին իրենց արձանագրութեանց մէջ գործածել սուսնէրերէն և աքքաղերէն լեզուները, ինչպէս որ տեղական պահանջներին էլ բաւարարութիւն տալու համար՝ դործ էին անել մանգայերէն, խարրիերէն, լուվերէն, բալայերէն և հաթերէն լեզուները:

Հաթեան նոր գիտութիւնը կարեւոր է ընդհանուր հնդեւրոպական լեզուաբանութեան և մասնաւորապէս հայերէնի տեսակէտով: Նախ՝ ջնջուած է արդէն այն ենթադրութիւնը թէ հաթերը հայեր են. երկրորդ՝ հնդեւրոպացոց հնագոյն յիշատակութիւնը, որ համաձայն ասորեստանցոց Սալմանասար Թագաւորի արձանագրութեան, հասնում էր մինչև 935 թիւը, հիմա շատ աւելի հասնում է. Ժ. Դարի նորագիւտ մանդայական արձանագրութեանց մէջ արդէն յիշուած են ինդրա, Վարունա և Միտրա հնդիկ աստուածութիւնները. և եթէ հնդեւրոպացի կամիսները Ասորեստանցոց մօտ յիշուած են 1926 թուից առաջ, ուրեմն նրանց գաղթը և Փոքր-Ասիայում հաստատուելը սրանից շատ աւելի հին է: Դրա համար էլ վերեւում նշանակեցինք Ն. Բ. երրորդ հազարամեակի վերջում:

Մեզ մնում է խօսել այն մասին թէ ինչ կայ կայ հայերէնի և նորագիւտ լեզուների, մասնաւորապէս կամիսերէնի միջև:

Այն սխալ կարծիքը թէ հաթերը հայեր են ըստ ենսէնի, և այն ենթադրութիւնները թէ հայերը Փոխաբացուց և Փոքր-Ասիական հնդեւրոպացիներին ցեղակից են, մեզ ըստ պատել էին տալիս խոշոր նմանութիւններ հայերէնի և կամիսերէնի միջև: Խորապէս յուսախաբուած ենք: Կամիսերէնը նման է հայերէնին այն չափով՝ որ չափով նման է որ և է հնդեւրոպական լեզու: Նա ո՛չ միայն անձուկ նմանութիւն է չունի հայերէնի հետ, այլ և պատկանելով հնդեւրոպական լեզուների կենտում խմբին, բաւական հեռանում է հայերէնից: Մի լեզու՝ որտեղ գտնում ենք ուզ, ուզաւս, զիգ-դու, ժումազ-դուք, նաւի-նոր, վաղաւ-ջուր, կիկուկ-այժմ, դա, դի-դեմ, ագ, եղ-ուտել ևն, միայն ընդհանրապէս մերձաւոր է հայերէնին և բնաւ աւելի չէ, քան յունարէնը կամ պարսկերէնը:

Ամփոփելով այս բոլորը մենք հասնում ենք հետևեալ եզրակացութեան: — Փոքր

Ասիայում բնակեալ ժողովուրդների հընազոյն խաւը հնդեւրոպացի չէ. աւելի յետոյ եւրոպայից եկել են հնդեւրոպական ցեղերի զանազան ալիքներ, ինչպէս կամիսները, հայերը և փոխաբացիք. հաստատուած չէ թէ այս ցեղերը միևնոյն ճիւղին են պատկանում, թէ և բոլորն էլ հնդեւրոպացի են:

Ինչ որ էլ լինի, հայերը ապրելով այս զանազան ցեղերի հարևանութեան մէջ, անկարելի է որ կրած չլինին նրանց ազդեցութիւնը թէկուզ փոքր չափով: Այս ազդեցութիւնը մենք երևան կարող ենք հանել լեզուի միջոցով: Համաձայն այն մեթոդին որ յիշեցինք նախորդ գլխում, եթէ մենք հայերէն լեզուից դուրս բերենք նախ՝ բոլոր բնիկ բառերը՝ որոնք հայերը ունէին արդէն եւրոպայում եղած միջոցին, և երկրորդ՝ բոլոր այն փոխառեալ բառերը, որոնք հայերը ձեռք բերին Հայաստան հասնելուց յետոյ (խալդերէն, ասորերէն, վերացերէն, ասուրերէն, պարսկերէն, յունարէն, լատիներէն և այլն), մնացեալը կը լինի համազուտաւ այն բոլոր փոխառութեանց, որ հայերը կնքել են փոխաբերէնից, թրակերէնից և բոլոր փոքր-ասիական լեզուներից: Այս բանը դժբախտաբար կապուած է երեք դժուարութեան հետ. նախ՝ որովհետեւ համազուտաբար պատկանում է բոլորին, ուստի մենք չենք կարող որոշել թէ ո՛ր բառերն են պատկանում փոխաբերէնի, կամ թրակերէնի, կամ կամիսերէնի և կամ միւս Փոքր-Ասիական լեզուներից մէկին կամ միւսին, քանի որ այդ լեզուներից ո՛չ մէկի մասին բաւարար ծանօթութիւն չունինք: Երկրորդ՝ փոխաբերէն, թրակերէն և կամիսերէն լեզուները լինելով հնդեւրոպական, և որոշ չափով մերձաւոր հայերէնի, վախ կայ որ այդ լեզուներից եղած փոխառութիւնները իրենց հնդեւրոպական գոյնի պատճառով խառնուած լինին բնիկ հայերէն բառերի մէջ. որով մի կողմից այդ փոխառութիւնները կը մնան անյայտ և միւս կողմից բնիկ հայերէն կոչւած բառերի մի մասը իրօք բնիկ չի լինել: Երրորդ՝ աւելի մեծ դժբախտութեամբ խալդերէն լեզուն մեզ յայտնի չէ, նոյնիսկ նրա ընդհանուր նկարագիրը մեզ անծանօթ է, հետևաբար մեր համազուտաբար չի կարող ճիշտ լինել և նրա մէջ կը լինին բոլոր Փոքր-Ասիական լեզուների հետ նաև

խաղերէնից փոխառեալ բառերը: Վերջին ճշտագոյն հաշուով՝ եթէ հայերէն լեզուից դուրս բերենք ծանօթ լեզուներէից փոխառեալ և բնիկ հայերէն բառերը, ձեռքացելը կը լինի Փոքր-Ասիոյ ոչ հնդեւրոպական լեզուներէից խաղերէն լեզուից փոխառեալ բառերի համագումարը: Այս համագումարը բաժանելու և խրաքանչիւրին իր ճիշտ բաժինը տալու համար մենք առայժմ միջոցներ չունինք և դատում ենք հետեւեալ ձևով:

ա) Այն բառերը՝ որոնց փոխազական համագոյն յայտնի է, պատկանում են բնականաբար փոխազական փոխառութեանց շարքին:

բ) Այն բառերը՝ որոնք թէև հնդեւրոպական ձև ունին, բայց ճշգիւ չեն համապատասխանում հայերէնի ձայնական օրէնքներին, համարում ենք փոխազական կամ ուրիշ որևէ Փոքր-Ասիական հնդեւրոպական լեզուից:

գ) Որովհետև հայերը շատ աւելի մեծ չիում ունեցել են խաղերի հետ, որոնք հայերէն շատ աւելի բարձր քաղաքակրթութիւն, գիր ու գրականութիւն ունէին և որոնց հետ միաստանութեամբ յետոյ մի ազգութիւն կազմեցին, ուստի և փոխառութեանց մեծ մասը պատկանում են խաղերէնին, հետեւաբար այն բոլոր բառերը՝ որոնք նախորդ երկու պայմաններից դուրս են մնում, համարում ենք խաղերէն:

Այստեղ պիտի հաւաքենք փոխազական և Փոքր-Ասիական փոխառութիւնները, խաղերէնները թողնելով յաջորդ գլխին:

1. Աստուած, նոյն է թրակո-փոխական այն նշանաւոր աստուածութեան հետ, որ յոյն մատենագիրները լիջում են սաբազիոս ձևով: Այս աստուածութեան անունը յատկացուցաւ յետոյ Բագոսին: Հայերէնի մէջ գերագոյն աստուածութեան անունն էր, դրա համար էլ յետոյ ընդհանուր իմաստ ստացաւ և քրիստոնէութեան ժամանակ նոյնիսկ հնդեւրոպական զիւրաւոր մոռացութեան մատնեց:

2. Սալլ, որի հին ձևը պիտի լինի սաւիլ. նոյն է սաւիլա «բոյլք աստեղաց»,

Մեծ Արջի համաստեղութիւնը (Հեմիքրոս), սաւիլե, յգ. սաւիլայ սալլ, կուռի կառք (մէկ մէկ անգամ գործածուած Հոմերոսի և Անակրէոնեան մի հատուածի մէջ): Յունարէն ձևերը Փոքր-Ասիական ծագում ունին և համարում են փոխազական փոխառութիւն: Մեր բառը համապատասխանում է իր երկու նշանակութիւններովն էլ. ուրովհետև հյ. սալլ նշանակում է ոչ միայն «եղան կառքը», այլ և մեծ և փոքր Արջի համաստեղութիւնները:

3. Փանդիւն, հին հայ վկայասանների նշանաւոր երաժշտական գործիքն է, որ կոչւում է նաև բանդիոն կամ բամբիրոն. սա մի տեսակ թելաւոր նուագարան էր, որի կազմութիւնը յայտնի է: Բառիս հետ բոյորովին նոյն են լիւդիարէն պուկուրա, պանդուրիոն, պանդուրիս «երեք լարով քընար», վրաց. փանսուրի, փանդուրի, թուշ. փանդուր, չեչեն. փանդուր լարաւոր նուագարան, օստ. ֆանդուր երկու լարով կիթառ: Փոքր-Ասիայից բառը անցել է յոյներին և տուել է պանդուրա երեքադեան քնար (յունաց մէջ աւանդութիւն կար միշտ թէ փանդիւր Փոքր-Ասիայից է եկած): Յունարէնից ձևացել են լատ. պանդուրա և թրք. փանդուրա, որի միջոցով էլ բուլգար, սերբ, ուկրայնական ձևերը:

4. Ագարակ, այս բառը շատ նման է հնչում հին. ագրո «արտ, անդառտան, ագարակ» բառին, որի հայերէն ժառանգն է արտ: Ըստ ձևի ագարակ չի կարող հայերէն լինել, և որովհետև նման է նախորդ բառերին, ուստի պէտք է համարել փոխառեալ: Փոխառութիւնը չի կարող լինել իրանեան լեզուներից՝ իր գ. ձայնի պատճառով. այլ պատկանում է արեւմտեան խմբին. հետեւաբար պէտք է դնել փոխազականից կամ կամիսերէնից, եթէ սակայն ստեմերական ագար «գաշտ» բառը չէ:

5. Արաղիլ նման է յունարէն պիլարգոս հոմանիշին, որ համարում է պիլաս սե և արգոս՝ սպիտակ բառերից բարդուած. բայց աւելի լաւ է դնել Փոքր-Ասիական մի լեզուից փոխառութիւն, որից է նաև հայերէնը:

6. Անխ. Այս բառի հետ նման են հնչում յունարէն սեկիւս, սիկիւս, սիկիւս

«վարուճաք, սեխ կամ զգուճ», որոնց ծագումը անստույգ է. հաւանաբար կցում են հալ. տիկը զգուճ բառին և համարում են թրակո-փուլեզական փոխառութիւն. նոյնպէս պէտք է ասել նաև հայերէն բառի համար:

7. Կարին. նման է յունարէն կարիս, կարիդոս բառին, որի ծագումը անյայտ է. պէտք է դնել Փոքր-Ասիական փոխառութիւն հայերէնի հետ:

8. Սրինգ. այս բառը համարում է փոխառեալ յունարէն սիրինգս բառից, որ սակայն լիովին չի ծածկում հայ ձևը. միւս կողմից յոյները մէջ աւանդութիւն կար թէ սրինգը Փոքր-Ասիական կամ փուլեզական ծագում ունի: Այս դէպքում ուրեմն աւելի յարմար է հայերէն բառը դնել ո՛չ թէ յունական, այլ փուլեզական փոխառութիւն:

Այս փոխառութիւնները որ նշանակեցինք վերևում, թուով չափազանց քիչ են, բայց որակով, այսինքն իրենց կուլտուրական արժանիքով շատ բարձր. — Աստուած բառը բովանդակում է իր մէջ բոլոր կրօնական և դիցաբանական աշխարհը. փանդիոն ու սրինգը ներկայացնում են ոչ միայն երաժշտութիւնը, այլ և հին հայոց վիպասանութիւնը, այսինքն անգիր բանահիւսութիւնը. սալը և ագարակը ոչ միայն ներկայացնում են ամբողջ գիւղական տնտեսութիւնը, այլ և սալը նշանակելով Մեծ Արջի համաստեղութիւնը, ներկայացնում է հին հայոց աստղաբաշխական դիտութիւնը: Այս տեսակէտով փուլեզական այս փոխառութիւնները մեծ արժէք ունին և ենթադրել են տալիս իրենց յետեւից փոխառութիւնների մի ուրիշ շարք, որ սակայն գիտութեան արդի միջոցներով անկարող ենք ճշգրտ ու որոշել:

Այժմ անցնենք կամիսական փոխառութեանց:

Եթէ կամիսերէնը, ինչպէս տեսանք, հայերէնին անձուկ ցեղակից լեզու չէ, այնու ամենայնիւ վստահ պէտք է լինել որ կարող է բացատրել մեր լեզուի ինչ ինչ մուծ կէտերը: Կան անշուշտ փոխառութիւններ, որ հայերէնը կնքել է նրանից կամ նրա յարակից միւս Փոքր-Ասիական լեզուներէ: Դեռ հրատարակուած չէ կամիսերէնի և միւս լեզուների լիակատար

բառարանը, բայց կան զանազան բառացանկեր և Մտուրաէվանտի հաթեան բառարանը (Բաղխմոր 1931), որոնցից օգտուելով կարելի եղաւ ինձ գտնել հետեւեալ համեմատութիւնները:

Ապպա-ապա, հասս-հատանել, հուլուլի-դորել, խուկիկ-խանգարիլ, պարեիլա-փշրել, դազան-յատակ, վար-վառել, արբիվար-առաւօտ, սեսար-փետուր, շարաւանգի-շարաւանդ:

Որանցից դուրս որ և է վստահելի համեմատութիւն չեմ կարող գտնել նոյն բառացանկերում: Վերոյիշեալ բառերն էլ վերապահութեամբ միայն կարելի է յիշել, որովհետեւ մեծ նմանութիւն չունին հայերէնի հետ: Անարժէք են նաև այն բոլոր համեմատութիւնները, որ զանազան մարդիկ առաջարկեցին վերջերս: Միակ վստահելի բառն է շարաւանգի. սրա համար նրկատենք որ կամիսական զ ձայնը նախադրածից ծագած լինելով՝ կամիսական շարաւանգի ձևի դէմ մենք կ'ունենանք աւելի հին շարաւանգի, որ բոլորովին նոյն է հայերէնի հետ:

Ամենից աւելի հայերէնին նման եմ համարում հաթերի Մուրչիլիշ աճուճը որով կոչւում են մի քանի թագաւորներ: Դա մեր Մուշեղն է, որ ոչ մի մեկնութիւն չունի դեռ: Մուրչիլիշ ձևի մէջ շ վերջաւորութիւնը եղակի ուղղականի կամիսական նշանն է, որ համապատասխանում է սանսկրիտ, յատին, յոյն օս, ուս վերջաւորութեանց: Բոտ այսմ պարզ ձևն է Մուրչիլի. սա պիտի տար հայերէն Մուրչիլ կամ Մուրչեղ և Ի ձայնի սովորական անկումով Մուշեղ. հմմտ. քարշել-քաշել, պարշտել-պաշտել և այլն:

Մի այսպիսի հին ու «ազգային» յատուկ անուան փոխառութիւնը կամիսերէնից, անշուշտ առանձին նշանակութիւն ունի և ենթադրել է տալիս որ նա մինակ չէ և ուրիշ նմաններ էլ պէտք է ունենայ:

ՊՐՈՖ. Ն. ԱՃՍՌԵԱՆ

